

1700-ԱՄՅԱԿԻ ԽՈՐՀՐԴՈՎ

ԱՄԳ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Առաջնորդ Իրաքի Հայոց թեմի

ՏԵՍԱՆՈՂՆ ՈՒ ՏԵՍԻԼՔԸ

Ի երբին ամեն եկեղեցանուէր աշխարանքի, ազգաշէն գործունէութեան կամ հանրօգուր ծառայութեան կայ ու կը մնայ վճիւր ու անխառն տեսիլք մը երկնածոր: Եւ տեսիլքը մերթ կ'արտայայտուի մեր կեանքերուն մէջ իբրեւ ստեղծագործական բուն խանդավառութիւն եւ մերթ կը դառնայ աւիւն դէպի ապագան փանող, հորիզոնէ հորիզոն անցնելու վճռակա-
մութեամբ փոքորուն:

Իսկ հաւաքացեալներու համար տեսիլքը Աստուածային ներշնչում է «զի ամենայն րորք բարիք եւ ամենայն պարգեւ կապարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն Լուսոյ...» (Յակ. Ա. 17): Այո, Աստուած իր նախախնամական իմաստութիւնը կը ծորէ հոգիներուն մէջ մարդոց, որուն առ ի հետեւանք անոնք կը դառնան յստակաբն դէպի ապագայի իրենց ծաւալելիք գործունէութեան: Ահա թէ ինչու երբ բացակայի տեսիլքը, գործը կը կաղայ կամ կը ձախտոյի, մինչ երբ այն ըլլայ պարզորոշ ու ջիւն յաջողութեան արգասիքը, այժմէն իսկ կ'երեւի յետագային ծնանելիք դէպքերու պատարաին վրայ:

Այսպէս հրաշագործուեցաւ Հայոց լուսաւորչին՝ Գրիգորի տեսիլքը: Չորրորդ դարու ա-
ռաջնէկ տարին տեսաւ Հայ ժողովուրդի դարձը դէպի քրիստոնէութիւն, որն արդէն իր ծիլը րուած էր երկու եւ կէս դարեր առաջ տեսական աշխարանքով Յիսուսի երկու հաւաքարիմ աշակերտներուն՝ Թադէոսի եւ Բարդողիմէոսի քարոզութեամբ եւ իրենց ու գործակիցներու մարտիրոսութեամբ:

Հոգիին խորունկը մեղապարտ ցեղէն սերած Պարթեւ Հայրապետին Գրիգորի հաւաքը առ Նագովրեցի վարդապետը Յիսուս կենսունակ էր ու մշտաբորբոք, որ ան իր աղօթքներու ընդմէջէն հրաւեր կարդացած էր Աստուծոյ Որդիին այցի գալու Հայոց աշխարհը:

Մեծ դարձի ժամանակներէն երեք դարերու հասնող հեռաւորութեամբ մարդացեալ Որ-
դին Աստուծոյ մարմնացած էր աշխարհի մէկ աննշան անկիւնը իրականացնելու Աստուծոյ րնօրինութիւնը մարդկային ցեղի րկրկութեան Գողգոթայի բարձունքին վրայ: Այդ օրերուն րակ էին մարդոց հոգիներուն դռները եւ րիեզերաց նորոգողը կամեցաւ ծնելու խղճուկ մտորի մը մէջ ի պարզունակ քաղաքին Բեթղեհէմի:

Յետ այնու երկու ու կէս դարերու քարոզութիւնն ու նահապակութիւնը ի խնդիր քրիստո-
նէական վարդապետութեան րոխած էր հոգեպարկերը Հայոց աշխարհին: Տեսանողին սիրտը, որպէս խորհրդանիշ Հայ ժողովուրդի հոգեմորոգութեան, ջերմ էր ու հաւարով լի: Նման Սիմէոն Ծերունայն Նոր Կտակարանի, Գրիգոր եւս կ'սպասէր Օծեալ Մեսիայի տե-
սութեան իր էութեան ընդերքին մէջ:

Ու մեծ տեսանողին սպասումները արգասաւորուեցան: Իր տեսիլքին մէջ յաղթական Բրիստոս իջաւ Արարարի դաշտերուն վրայ, իջաւ նուէրով երկնաշնորհ՝ լուսեղէն րաճարի մը ձեւը սիւներով եւ կամարակապ րորուեցաւ հաւաքոյ հօրն մերոյ. իջաւ պարզամով լու-

սագարդության, իջաւ երաւիքելու Հայ ժողովուրդը իր լինելութիւնը պայմանադրելու «լուսոյ խորաններ» կառուցանելու Աստուածահաճոյ աշխարհաբոլ, որպէսզի լոյսը իմանալի ծագի ընդմիշտ սրբերուն մէջ Հայերուն: Տասն եւ եօթ դարեր շարունակաբար Ս. Էջմիածիւնը խորհրդով մը խորին եղաւ ու մնաց Հայ ժողովուրդի առողջ բնագոյնն ու միջ ուժը, սրբազորական հանճարի ապաւէնը, ոգեկան քրկունութեան հենարանը, հոգեւոր ու հաւաքական կեանքի խիզախ դրսեւորումը եւ բարոյական հարուստ նկարագրի չափանիշը:

Երանաւէր այդ րեսիլքի սուրբ պահէն ասդին Հայ ժողովուրդը եղաւ լուսաբաղձ ժողովուրդ, եղաւ շինարար ազգութիւն: Եւ ինչքանով իր հոգին կրցաւ բանալ Էջմիածնի խորհուրդին վրայ, այնքանով աւ սպողաբերեցաւ անձնապէս, բայց մանաւանդ իր հաւաքական կեանքին մէջ «... Եւ բերէր ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր» (Մարկ. Դ. 8):

Ահա այսպէս Միածնի էջքը մեր մէջ եղաւ ու կը շարունակէ մնալ Էջմիածին՝ Սրբութիւն Սրբոց Լուսաւորչաշէն քաճար ամենայն Հայոց: Ս. Էջմիածինը մեզի համար Աստուծոյ քաճար է, աղօթքի ու ազգի քուն է ու Հայաստանայց Առաքելական Եկեղեցւոյ ընդհանրական Հայրապետութեան Աթոռ: Իսկ Հայրապետը Ամենայն Հայոց, որպէս իր օրերու Նոր րեսանդը, ինքն է պահապանը րեսիլքի յարաքնութեան իրեն սահմանուած սպասաւորութեան ժամանակի րեսողութեան:

Աստուած երկու անգամ իջաւ աշխարհ: Մին որպէս մարդացեալ Յիսուս ի Պաղեստին եւ միւսը որպէս յաղթական Քրիստոս ի Հայրենի երկիրը մեր:

Թող 1700-ամեակը Ս. Էջմիածնի կառուցման ըլլայ ու մնայ Հայ ազգին համար գրաւականը գալիք յաղթական երթերու եւ երաշխիքը նոր խոյանքներու, նոր արշալոյսերու: Տայ Աստուած: